# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 մարտի 2025 թվականի N 340 - Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԵՆՈՒՂԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 4-ՐԴ ՓՈՂՈՑԻ ՆՆ 1 ԵՎ 3 ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՎԹԱՐԱՅԻՆ ՇԵՆՔԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐՈՒՄ ՓԱՍՏԱՑԻ ԲՆԱԿՎՈՂ, ՏԻՐԱՊԵՏՈՂ ԿԱՄ ՕԳՏԱԳՈՐԾՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ, ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 2060-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասը, «Սոցիալական աջակցության մասին» օրենքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետը և 5-րդ կետի «ա» ենթակետը, նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշմամբ հաստատված N 1 հավելվածի «Քաղաքաշինություն» բաժնի 15-րդ կետի 15.7-րդ ենթակետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածի N 2 աղյուսակում կատարել վերաբաշխում, N 1 հավելվածի N 3 աղյուսակում՝ փոփոխություն, Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2060-Ն որոշման NN 3, 4, 5, 9 և 9.1 հավելվածներում կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն NN 1, 2, 3, 4, 5 և 6 հավելվածների:

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի Լենուղի բնակավայրի 4-րդ փողոցի NN 1 և 3 բազմաբնակարան վթարային շենքերի բնակարաններում փաստացի բնակվող, տիրապետող կամ օգտագործող (բնակարանը փաստացի և բացահայտ գտնվում է անձի կամ անձանց տիրապետման ներքո և օգտագործում է, որպես սեփական գույք) բնակիչներին (այսուհետ՝ շահառուներ) բնակարանային պայմանների բարելավման նպատակով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմին 2025 թվականին հատկացնել 182,500.0 հազ. դրամ, որն ուղղվում է շահառուներին բնակարան ձեռք բերելու համար բնակարանի (բնակելի տան) գնման վկայագրի տրամադրման կամ անհատական բնակելի տուն կառուցելու (կառուցապատումը շարունակելու) վկայագրի (այսուհետ՝ վկայագիր) միջոցով ֆինանսական աջակցության տրամադրման համար:

3. Շահառուներին բնակարանային պայմանների բարելավման նպատակով վկայագրի միջոցով տրամադրել ֆինանսական աջակցություն՝ սույն որոշման N 7 հավելվածով հաստատվող կարգի համաձայն:

4. Սահմանել, որ սույն որոշման 2-րդ և 3-րդ կետերի համաձայն՝ շահառուներին վկայագրերի տրամադրման գործընթացն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմը:

5. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին՝

1) ապահովել սույն որոշմամբ նախատեսված աշխատանքների կատարման ընթացքը և երկամսյա պարբերականությամբ Հայաստանի Հանրապետության

տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ներկայացնել տեղեկատվություն՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքների կատարման ընթացքի վերաբերյալ, մինչև համապատասխան աշխատանքների ավարտը.

2) շահառուներին աջակցության տրամադրման գործընթացն իրականացնել սույն որոշման և դրանով հաստատված հավելվածով սահմանված կարգի համաձայն:

6. Սահմանել, որ պայմանագիրը կնքելուց հետո շահառուներն իրենց կողմից փաստացի տիրապետվող կամ օգտագործվող բնակարաններն ազատում են 10-օրյա ժամկետում:

7. Առաջարկել Արմավիր համայնքի ղեկավարին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմին ներկայացնել շահառուների ցուցակը և նրանց մասով նախատեսված ֆինանսական աջակցության չափը.

2) սույն որոշման 2-րդ կետում նշված վթարային շենքերի բնակեցումից ազատված բնակարաններում չիրականացնել քաղաքացիների կրկնակի բնակեցում.

3) սույն որոշմամբ նախատեսված աջակցության տրամադրումից հետո օրենսդրությամբ սահմանված կարգով՝ համայնքի միջոցների հաշվին 6-ամսյա ժամկետում իրականացնել սույն որոշման 2-րդ կետում նշված վթարային շենքերի քանդման աշխատանքները:

8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

21.03.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ